ՀՀ փաստաբանների պալատի
Հաշվիչ հանձնաժողովի նախագահ
պարոն՝ Ապետնակ Պողոսյանին

Փաստաբաններ՝

1. **Գայանե Դեմիրչյանից**
(արտոնագիր՝ 1881)

2. **Եվգենիա Մուրադյանից**
(արտոնագիր՝ 1883)

3. **Արթուր Ապիկյանից**
(արտոնագիր՝ 1854)

4. **Արտակ Շադյանից**
(արտոնագիր՝ 2193)

ԴԻՄՈՒՄ

Հունիսի 2-ը որպես «Փաստաբանի օր» սահմանելու մասին

Հիմք ընդունելով 21.12.2016թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 500-Լ որոշման հավելվածով հաստատված «Փաստաբանի օր» սահմանելու հարցով փաստաբանների առաջարկներն ընդունելու մասին կարգը՝ սույն դիմումով առաջարկում ենք **հունիսի 2-ը սահմանել որպես «Փաստաբանի օր»:**

Հիմնավորումներ.

1921 թվականի մարտի 15-ին հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, հայ վրիժառու, Հայոց ցեղասպանության վերապրող Սողոմոն Թեհլերյանը Նեմեսիս գործողության շրջանակներում Բեռլինի Շառլոտենբուրգ թաղամասի Հարդենբերգ

փողոցում գնդակահարել է երիտթուրքերի ներքին գործերի նախարար և **Հայոց ցեղասպանության** գլխավոր կազմակերպիչ Թալեաթ փաշային:

1921 թվականի **հունիսի 2-ին** Բեռլինում տեղի է ունեցել Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, որն ավարտվել է Թեհլերյանի **արդարացման դատավճռով**:

Հարկ է նկատել, որ «Փաստաբանի օր» սահմանելը ինքնանպատակ չէ, այլ հետապնդում է որոշակի կոնկրետ նպատակներ, այն է՝

- հայոց անկախ պետականության ներկայիս փուլի կերտում՝ Հայաստանի Հանրապետության նաև **իրավական պետություն** լինելու ընդգծման միջոցով և հայոց պատմության անցյալի վերաարժևորում՝ մասնավորապես, հայոց ցեղասպանությանը նաև իրավական գնահատական տալու, նշված հարցը միջազգային հանրության դիտանկյունից ներկայացնելու միջոցով,
- լայն առումով փաստաբանական ինստիտուտի և մասնավորապես փաստաբանի դերի և հեղինակության բարձրացում և կարևորում հայ հասարակության շրջանակներում՝ նպաստելով նաև իրավական գիտակցության բարձրացմանը,
- միջազգային կապերի ամրապնդում, օտարերկրյա գործընկերների ներկայության ապահովում՝ ընդգծելով օրվա խորհուրդն ու կարևորությունը,
- այլ նպատակներ:

Տվյալ դեպքում **հունիսի 2-ը** առավել քան նպաստում է վերոնշյալ նպատակների ապահովմանը: Մասնավորապես՝ նշված օրը սահմանելով և նշելով որպես «Փաստաբանի օր» մենք՝ փաստաբաններս, նախ՝ կարևորում ենք **արդարացման դատավճիռներն** առհասարակ՝ ընդգծելով նաև մարդու իրավունքների պաշտպանությունը միջազգային մակարդակով, քանի որ տվյալ դեպքում արդարացման դատավճիռ կայացրել է Բեռլինի դատարանը, ինչպես նաև հանրության ուշադրությունն ենք հրավիրում Սողոմոն Թեհլերյանի **արդարացման դատավճռի** հիմքում ընկած դրդապատճառների ու փաստերի վրա՝ մասնավորապես ընդգծելով հայոց ցեղասպանությունը որպես հանցագործություն դատապարտելու միջազգային-իրավական գնահատականները:

Բացի այդ, հարկ է նկատել, որ ճիշտ է՝ Հայոց ցեղասպանությունը հայոց պատմության ամենացավալի և ամենաողբերգական էջերից մեկն է և յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին մենք հարգանքի տուրք ենք մատուցում եղեռնի ժամանակ անմեղ զոհվածների հիշատակին, սակայն չպետք է մոռանալ, որ մեր պատմությունը լի է նաև մեծագույն հաղթանակներով, որոնցից մեկն էլ հանդիսանում է 1921թ. **հունիսի 2-ի**

Սողոմոն Թեհլերյանի Թալեաթ փաշային սպանելու արարքին, վերջինիս արդարացրեց՝ որպես անմեղի: Սա հայ ազգի **իրավական առումով առաջին հաղթանակն է** ցեղասպան Թուրքիայի նկատմամբ:

Այսինքն՝ նույնիսկ ամենացավալի իրադարձությունների միջից, մենք՝ հայերս դուրս ենք եկել հպարտությամբ, ավելին՝ կարելի է և պետք է մեր ցավը հիշենք նաև հաղթանակներով:

Եվ ինչու եղեռնի մասին պետք է հիշել միայն ապրիլի 24-ին, եթե կարելի է տարվա մեջ 2 անգամ այն հիշատակել, բայց 2-րդը հպարտությամբ, իրավական գնահատականներով և փաստաբանի օրը տոնելով, քանզի այն հաղթանակած օր է:

Այսպիսով, կարևորելով «Փաստաբանի օրվա» խորհուրդը և նշված օր սահմանելու նպատակները, կարծում ենք, որ **հունիսի 2-ը** առավել քան նախընտրելի օր է:

Հարգանքով՝

Գայանե Դեմիրչյան

/Անուն, ազգանուն/ /ստորագրություն/

Եվգենիա Մուրադյան

/Անուն, ազգանուն/ /ստորագրություն/

Արթուր Ապիկյան

/Անուն, ազգանուն/ /ստորագրություն/

Արտակ Շադյան

/Անուն, ազգանուն/ /ստորագրություն/

17.01.2017